



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 212 686-0710

ARCHBISHOP TORKOM MANOOGIAN, PRIMATE

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԻՒ 347

Վիճակիս Հոգեշնորհ եւ Արժանաշնորհ Հոգեւոր Հովիւներուն
եւ Պատուարժան Ժխական Խորհուրդներուն

Այսու կը յիշեցնենք վիճակիս Հոգեւոր Հովիւներուն եւ Ժխական Խորհուրդներուն, Թեմական Կանոնադրութեան համաձայն, յառաջիկայ Յունուար ամսուան ընթացքին գումարել Տարեկան Ժխական Ժողովները --գլխաւորաբար նկատի ունենալով Թեմական Կանոնադրութեան թիւ 17 յօդուածը--:

Հետեւեալները պէտք է Առաջնորդարան ղրկուին անմիջապէս որ պատրաստ ըլլան.

1. Ժխական Ժողովին ներկայացուած տեղեկագիրները.
2. Ժխական Ժողովին ներկայացուած ելեւմտական հաշուեկշիռը.
3. Անդամներուն ղրկուած հրաւիրագիրէն եւ օրակարգէն օրինակ մը.


Հետեւեալները պէտք է Առաջնորդարան ղրկուին ձեր տարեկան Ժխական Ժողովէն անմիջապէս ետք, անոնց ընկերացող նամակով մը՝ ուր յիշուած պէտք է ըլլան համայնքի տրատու անդամներուն թիւը եւ Ժողովին մասնակցած անդամներուն թիւը.

4. Ժխական Ժողովի ընտրութեանց արդիւնքը --ընտրութեան քուէաթուղթէն օրինակ մը՝ թեկնածուներուն անուններով եւ ստացած քուէներով--.
5. Թեմական Պատգամաւորներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը.
6. Եկեղեցական կազմակերպութեանց վարչական մարմիններու ատենապետներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը.
7. Առաջնորդարանէն ղրկուած տպագրեալ տեղեկագիրները.
8. Ժխական Ժողովի ատենագրութիւնը:

Այս առթիւ կը տեղեկացնենք թէ 74րդ Տարեկան Թեմական Պատգամաւորական Ժողովը պիտի գումարուի Ուինվուտի, Փենսիլվէնիա, Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Հայց. Եկեղեցւոյ մէջ 1976 Ապրիլ 30 եւ Մայիս 1, Ուրբաթ եւ Շաբաթ օրերը:

Անհրաժեշտ է որ ծխական ճարեկան ժողովները գումարուհին Յունուար ամսուան ընթացքին՝ որպէս զի կարենանք ի ձեռին ունենալ համայնքներու տեղեկագիրները եւ պատգամաւորներուն ցանկը, եւ պատրաստել Թեմական Խորհուրդի տարեկան տեղեկագիրը Մարտ ամսուան մէջ:

Սիրոյ ողջունիւ



ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Նոյեմբեր 10, 1975
Նիւ Եորք, Ն.Յ.